

իրենց հայրենակիցը ու կ'իջնեն Յորդանան. այս ճամբորդները Երիքովի ճամբուն վրայ Խան էլ-Ահմարէն կը տեսնուին 8-10 քիլոմէթր հեռաւորութեամբ. անոնք ուղիղ կ'երթային Սահէլ տեսնելու իրենց հայրենակիցը. Եւթիմիոս հեռուէն կը տեսնէր հայ ուխտաւորները ու կ'ըսէր վանուց մատակարարին որպէս զի եկողներուն համար ուտելիք պատրաստէ, մատակարարը կը պատասխանէ. հա՛յր, հազիւ տասն անձերու ուտելիք ունիմ, ի՞նչպէս կրնամ այսքան բազմութեան հաց պատրաստել. Եւթիմիոս մարգարէական ոգւով մը լեցուած կ'ըսէ անոր. գնա՛, ինչպէս քեզ հրամայեցի, վասն զի Ս. Հոգին ըսած է, կերի՛ն առկեկեալս եւ յազեցա՛ն. մատակարարը գնաց այն փոքր մառանը, ուր քանի մը հացեր կային, և ան չկրցաւ դուռը բանալ. աստուածային օրհնութիւնը հացով լեցուցած էր մառանը, քանի մը վանականներու օգնութեամբ մատակարարը դուռը բացաւ և հացերը դուրս թափեցան մառանէն: Միւսնոյն օրհնութիւնը տարածուած էր գիրիխն և իւզին վրայ: Ուխտաւոր հայերը կերան և կշտացան, և երեք ամիս անկարելի եղաւ մառանին դուռը գոցել: Մատակարարը Եւթիմիոսի ոտքը ինկաւ և ներդուծիւն խնդրեց. Սուրբը ըսաւ անոր. «Զաւակս, այն որ օրհնութեանց մէջ կը ցանէ, նմանապէս օրհնութեանց մէջ կը հնձէ»: Մելիտիները հայոց այս ուխտաւորութիւնը անտարակոյս այս առաջին անգամը չէր, և ոչ ալ վերջինը: Ս. Քաղաքին մէջ հիմնուած Ս. Պողիկտոսի գեղաշուք դամբարանը ու դարձեալ Մելիտիները Մեծ Անապատականին վանքը հայ քրիստոնէութեան նախնական դարերուն հայ ուխտաւորութեան համար մխրթարութեան և հոգեւոր զուարթութեան կեդրոններ էին. մանաւանդ որ առաջինը հայկական հաստատութիւն մըն էր, և երկրորդը քրիստոնէական սրբավայր մը և կը պարունակէր իր մէջ սուրբ հաւատքին ու կրօնաւորութեան ծառայող բարձր իմացականութեամբ օժտուած հայ եկեղեցականներ:

Այս տողերուն խմբագրութեան առթիւ օգտուած ենք Fr. Raymond Génierի Vie de Saint Euthyme le Grand 377-473 գիրքէն:

